նեաց, և 'ի հատոր 40, 41, 42, երորդ Օրինաց տալով նմայ իշխանութիւն երիս տանուտէրաց հաստատի 'ի սիրտ ամենայն հայոց, զի իշխանութիւն իշխանաց իւրեանց ելանէ ըստ իւրաքանչ ամենայն անձանց հայոց, իւրաքանչիւր անձն իշխան բանական բնութենէ իւրեանց, զինքեանք արարին իշխան 'ի վերայ իւրեանց, ոչ վասն իշխելոյ նոցայ ըստ կամաց և հաճոյից իւրեանց 'ի վերայ ժողովրդեան՝ եթէ ոչ իշխան պաշտօնատարութեան վասն գործ ածելոյ յօրէնս կարգադրութեան հայոց, սոքայ երեքեան նորաբողբոջ իշխանքս ընկալեալ 'ի սեպհական ազգէն հայոց կարգ բանական իշխանութեան և պատիւ տանուտէրութեան ունին իշխանութիւն յետս առնելոյ նամակն հայրախնամութեան հայաստանեաց 'ի ձեռանէ Տեառն Մաղաքիայ հայրախնամէ, և արձակել նմայ պատուով զի նա կալով ճնասցէ 'ի պատօնն իւր փոխանորդութեան, և երիս նորայ բողբոջ տանուտէրքս ունեն իշխանութիւն տալոյ նամակ պաշտօնի ընդ ամենայն փոխանորդաց հայոց, մի 'ի երկուս անձանց պաշտօն տանուտէրութեան, որպէս տասնինն երորդ յօրէնս, նա ևս այս երիս տանուտէրքս ունին իշխանութիւն հանդերձ բոլոր տանուտէրօք հայոց ընդունիլ յօրէնս և տալ իշխանութեան ամենայն պաշտօնի ըստ վեց տասան, և ութն տասաներորդ յօրէնս։